ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 17 » նոյեմբեր 2023թ. No 5524 - Ա

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 27-ի «Պետության կարիքների համար կենտրոնացված կարգով ձեռք բերված և մարդասիրական օգնության կարգով ստացված դեղերի բաշխման և բաշխում իրականացնող հաստատությունների կողմից հաշվետվությունները ներկայացնելու կարգը, հաշվետվությունների ձևերը հաստատելու մասին» թիվ 926-Ա հրամանը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Առողջապահության նախարարության հասցեով մարդասիրական օգնություն ստացված ու բժշկական հաստատություններին և մարզերին հատկացվող դեղերի և բժշկական նշանակության ապրանքների բաշխացուցակը՝ համաձայն հավելվածների (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ - գլխավոր հաշվապահ՝ Մանյա Մխիթարյանին.

1) ապահովել սույն հրամանից բխող բոլոր գործարքների սահմանված կարգով հաշվապահական ձևակերպումները:

3. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Բալոյանին՝

1) Իրազեկել սույն հրամանի հավելվածով հաստատված բաշխացուցակում նշված բժշկական հաստատություններին.

2) Ապահովել մարդասիրական օգնությամբ ստացված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների բաց թողնումը՝ համաձայն սույն հավելվածով հաստատված բաշխացուցակի:

4. Առաջարկել ՀՀ բժշկական հաստատությունների տնօրեններին՝

1) Ընդունել ի գիտություն և ապահովել մարդասիրական օգնությամբ ստացված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ստացումը ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից՝ համաձայն սույն հավելվածով հաստատված բաշխացուցակների.

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ